Գեղամ Ասատրյան

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր-Ազգային գաղափարախոսություն, ինքնություն, թերարժեքության բարդույթ, հիմնախնդիրներ, ընդհանրական արժեքներ, լուծման ուղիներ:

Ազգային գաղափարախոսությունը ազգի և պետության զարգացման ռազմավարությունն է՝ իր մարտավարական լուծումներով: Մեկ այլ ձևակերպմամբ՝ ազգային գաղափարախոսությունը ազգի անդամներին իրար հոգեպես կամ գիտակցորեն կապող և շաղկապող գաղափարների ու արժեքների համակարգ է [1]: Բնական հարց է առաջանում՝ մի՞թե կան արժեքներ, որ կարող են ընդհանրական լինել մեկ ամբողջական ազգի համար: Բնականաբար, այո՛: Մուշեղ Լալայանը, նշելով, որ թեև չկա համընդհանուր գաղափարախոսություն բոլոր հայ կոչվողների (օրինակ՝ ազգասերի և ազգադավի, աշխատավորի և թալանչիի) համար, միաժամանակ ընդգծում է, որ կան ընդհանրական գաղափարներ և արժեքներ (հայրենիք, անկախություն, լեզու, մշակույթ և այլն) բոլոր այն հայորդիների համար, որոնք շատ թե քիչ պարտավորվածություն են զգում ազգի և հայրենիքի հանդեպ[2]: Ազգային շահի ավելի ծանրակշիռ լինելու մասին հստակ սահմանում է տալիս նաև Անտոնի Դ. Սմիթը՝ այսպես ավարտելով ազգային ինքնությանը նվիրված իր ուսումնասիրությունը. «Մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումների մեջ ազգայինը ամենահիմնարարն է ու տարողունակը: Խմբային ինքնության այլ դրսևորումները՝ սեռ, դասակարգ, կրոն կարող են մասնակի համընկնել, սակայն, երբեք չեն կարող լինել այդքան ընդգրկուն»[3]:

Ազգերի և պետությունների կյանքում հույժ կարևոր են ներքին համախմբան և համերաշխության հասնելու մեթոդները, ուստի «բացի արտաքին արգելքները հաղթահարելուց, ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ անդադար պիտի ստեղծի այն արժեքները, որոնք նրա ինքնության առհավատչյաներն են»[4]: Յուրաքանչյուր ժողովուրդ, ազգ, պետություն իր առաջ գոյապահպանման խնդիր է դնում և ստեղծում մի կուռ համակարգ այն իրագործելու համար: Դա, ըստ ամենայնի, ժողովուրդների ինքնապաշտպանության բնազդից բխող երևույթ է, ուստի ամենևին պատահական չէ, որ թեմայի մեկնությամբ զբաղվող մասնագետները ազգային գաղափարախոսությունը դիտարկում են նաև ինքնապաշտպանության բնազդի համատեքստում. «Այն ժողովուրդները, որոնք բնության կողմից տրված ինքնապահպանման բնազդը չեն վերածում գիտականորեն հիմնավորված ազգային գաղափարախոսության, կործանվում են»[5]: Այդ համատեքստում է դիտվում նաև հայոց ազգային գաղափարախոսությունը, որը, «հանդիսանալով ժամանակակից հայ ազգի ինքնության ընկալման և ինքնագիտակցության ձևավորման բարձրագույն մակարդակը, տեսականորեն հիմնավորում է նրա առջև կանգնած և լուծման կարոտ այն խնդիրները, որոնք բնորոշ են ազգակազմավորման, ազգային-ազատագրական շարժումների ծավալման, անկախ պետականության վերականգնման փորձերի, նրա սահմանների ամբողջացման և բյուրեղացման դարաշրջանին»[6]:

Ազգային գաղափարախոսության գլխավոր հատկանիշը թերևս տվյալ ազգի հոգեբանությանը համապատասխան լինելն է: Ահա թե ինչու ազգային գաղափարախոսությունները պետք է լինեն ոչ թե պետականորեն պարտադրված գործընթաց, այլ՝ ավելի խորքային: Սակայն այս համատեքստում չի նսեմանում նաև պետական գործոնի

---

[1] Տե՛ս Լալայան Մ., Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ, Ե., 2008, էջ 4:
[2] Նույն տեղում, էջ 3-4:
[3] Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, Ե., 1999, էջ 28:
[4] Տերյան Վ., Հոգևոր Հայաստան, տե՛ս Ընտրանի, բանաստեղծություններ (լիակատար ժողովածու), թարգմանություններ, հրապարակագրություն, նամակներ, Ե., 2005 էջ, 537-538:
[5] Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 8:
[6] Խուդինյան Գ., Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն, Ե., 2002, էջ 32:

դերը: Յուրաքանչյուր ազգ գոյության վտանգի առաջ է առանց անկախ պետականության, և այստեղ է, որ պետությունն էլ պետք է լինի այն միջոցը, որով կյանքի պիտի կոչվեն ազգային գաղափարախոսությունները. «Ազգային գաղափարախոսության նպատակը ազգի և հայրենիքի միասնության ապահովման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է՝ որպես միջոց օգտագործելով անհատների, խմբերի (կուսակցությունների), իսկ հնարավորության դեպքում՝ նաև պետության նպատակամղված ջանքերը»[1]:

Ազգային գաղափարախոսությունը հույժ պարտադիր է հատկապես փոքր ազգերի և ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումներով լի ժամանակաշրջանում օտար՝ ոչ հոգեհարազատ մշակույթների գայթակղությունը հաղթահարելու համար: Հաշվի առնելով գլոբալիզացիայի առաջ քաշած խնդիրները՝ հարկ է նշել, որ հայոց ազգային գաղափարախոսության հիմքում չեն կարող դրվել օտար ուսմունքներ և արժեքներ, քանզի «մի ազգի հարատևումը իրականանալի է միայն սեփական, այլ ոչ փոխառյալ գաղափարներով» [2] : Գոյություն ունեն հիմնադրույթներ, որոնք ընդհանրական են բոլոր ազգերի համար՝ ամբողջական հայրենիք, ազգային մշակույթ, անկախ պետականություն և այլն: Իսկ ի՞նչ է ազգը, և ո՞րոնք են ազգի գոյատևման հիմնական գործոնները: Հարցի պատասխանը ձևակերպում է Լենդրուշ Խուրշուդյանը. «Ազգը կենդանի օրգանիզմ է, պատմաէթնիկական կատեգորիա: Յուրաքանչյուր ազգի գոյապահպանման համար անհրաժեշտ են հետևյալ ազգային գործոնները. լեզու, մշակույթ, պատմական հիշողություն, մտածողություն, ինքնագիտակցություն, բնավորություն, հոգեբանություն, հոգեկան կերտվածք, նկարագիր, զգացում՝ ազգասիրություն, հայրենասիրություն և հպարտություն, ոգի, ընտանիք, կրոն, ճաշակ, կենցաղ, էթնիկական ավանդույթներ ու սովորույթներ և այլն»[3]: Սակայն յուրաքանչյուր ազգի պատմական զարգացման գործոնները ստիպում են վերոնշյալ ընդհանրական հիմնադրույթներով հանդերձ՝ ազգային գաղափարախոսության հիմքում ներառել նաև մի շարք առանձնահատկություններ: Պատմական գործոնների հետևանքով այդ առանձնահատկությունները չեն շրջանցել հայ ժողովրդին, ուստի հայոց ազգային գաղափարախոսությունը իր դասական մոտեցումներով հանդերձ պետք է միտված լինի նաև այդ խնդիրների լուծմանը: Այդ խնդիրների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում, օրինակ, Հայկական հարցի լուծման ուղիների ամրագրումը, հայրենիք-սփյուռք փոխկապակցվածության ապահովումը և ըստ այդմ՝ հայրենիքում համախմբվելու տեսլականի հիմնավորումը: Սակայն ակնհայտ է, որ նախքան դրանց լուծմանը միտված քայլեր անելը պետք է զբաղվել ավելի մոտ խնդիրների լուծմամբ՝ պետականության ամրապնդում, հայ ժողովրդի գաղափարական միասնության ապահովում, հայության անվտանգության ապահովում և այլն:

Ազգային գաղափարախոսության մասին խոսելիս պետք է բավականին զգույշ լինել, քանի որ դրա մեջ անվիճելի դեր ունեն ազգային հոգեբանությունն ու հոգեկերտվածքը, և դա պետք է բխի ազգի էությունից՝ հստակորեն սահմանելով տվյալ ազգի ներկայացուցչի դասական կերպար՝ դրանից բխող վարքով և արժեքային համակարգով: Ցավոք, սրանք ենթարկվում են փոփոխությունների, երբ տվյալ ժողովուրդը երկար ժամանակ չի ունենում անկախ պետականություն: Գտնվելով օտար լծի տակ՝ հաճախ կորսվում են ազգայինն ու ավանդականը՝ տեղը զիջելով օտար, ոչ հոգեհարազատ մշակույթի: Այնինչ, «հայրենիքը ազգային դիմագիծ է ստանում, ազգայնանում է ազգային մշակույթով, յուրաքանչյուր ժողովրդի ազգային կերպարը, նկարագիրը, բնավորությունը և հոգեբանությունը պայմանավորված են ազգային մշակույթի առանձնահատկություններով»[4]: Երկար տարիներ օտար տիրապետության տակ ապրելուն ուղեկցում են ուծացումը, սեփական ուժերի թերագնահատումը, ազգային բնավորության խեղումը և մի շարք այլ բարդույթներ: Իսկ դրանք

[1] Նույն տեղում:
[2]. Լալայան Մ, նշվ. աշխ., էջ 13:
[3] Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 15:
[4] Նույն տեղում, էջ 45:

ուղղակիորեն չեն կարող չանդրադառնալ տվյալ ազգի հետագա գոյության վրա, քանզի «ժողովուրդները կործանվում են իրենց բնավորությունների որակի փչացմանը համաչափ»[1]: Ուստի այս համատեքստում է, որ անչափ կարևորվում են իրականությունը ճանաչելը, սեփական ուժերը ռեալ գնահատելը, այլ կերպ ասած՝ ազգային հիմնախնդիրներին տիրապետելը և պարզելը, թե դրանք որքանով են ազդել ազգային դիմագծի վրա: Եվ ամենևին պատահական չէ, որ մի շարք գործիչներ, խոսելով և գրելով թեմայի շուրջ, լուծումներ առաջարկելուց առաջ նախ փորձել են պատկերացում տալ ազգային հիմնախնդիրների մասին: Գործելով այդ նույն տրամաբանությամբ՝ մենք ևս կփորձենք նախ տալ պատկերացում ազգային մի շարք հիմնախնդիրների մասին, որոնք անշուշտ արդյունք են երկար տարիներ օտար տիրապետության, ապա՝ ըստ այդմ տալ խնդրի՝ մեր պատկերացրած լուծումները:

Ժամանակին խոսելով ներքին պատճառականության մասին՝ փիլիսոփայության դոկտոր, Գարեգին Նժդեհի գաղափարակից ընկեր Հայկ Ասատրյանը կազմել է հիմնախնդիրների համակարգ: Փորձենք առանձնացնել դրանց այն հատվածը, որոնցից բխում են ազգային գաղափարախոսության ճշմարտացի կառուցումը խոչընդոտող խնդիրները: Ըստ Հայկ Ասատրյանի՝ աղետների ներքին պատճառականության գլխավոր տարրերից են ազգային ոգու խաթարումը, անինքնաճանաչությունը, իշխանության զգացումի պակասը, բարոյական կորովի պակասը, ցեղային դավանանքի պակասը, անլիարժեքության զգացումի տիրապետումը[2]: Հասկանալի է արդեն, որ անկախ պետականության անհրաժեշտությունը չգիտակցելը, մայրենի լեզուն աղավաղելը, ազգային մշակույթը օտար մշակույթով փոխարինելը միայն հետևանքներ են վերոնշյալ պատճառների, օրինակ՝ թերարժեքության բարդույթը հետևանք անինքնաճանաչության և ազգային ոգու խաթարման, կամ սեփական մշակույթի աղավաղումը՝ հետևանք ցեղային դավանանքի պակասի: Իսկ այս բոլորը միասին հետևանքներ են պատմական և աշխարհաքաղաքական գործոնների ազդեցության (դարեր շարունակ օտար լծի տակ ապրելու, ցեղասպանության և այլն): Այստեղ է, որ անելիք ունի ազգային գաղափարախոսությունը, որը ‹‹անհատի մեջ պետք է սերմանի ազգային հպարտություն, ազգի ապագայի նկատմամբ՝ հավատ, զերծ պահի նրան անլիարժեքության, սնապարծության, գերարժեքության, նորահավատության և այլ ախտավոր բարդույթներից››[3]: Ըստ էության, նույն խնդիրն է առաջ քաշում նաև Մուշեղ Լալայանը՝ նշելով, որ մեզանում առկա հոգեբանական խնդիրները հիմնականում հետևանք են երկու ախտի. ա) բնական օրենքներն ու օրինաչափությունները չիմանալը, բ) մեր ցեղի պատմությանն ու մշակույթին, նրա իրական արժեքներին, առաքինություններին ու թերություններին անծանոթ լինելը-մի խոսքով՝ անցեղաճանաչության[4]:

Խոսելով ազգային բնավորության խեղաթյուրման և ձեռքբերովի հատկանիշների մասին՝ Լենդրուշ Խուրշուդյանն էլ նշում է, որ թերարժեքության բարդույթի հիմնական ձևերն են բնավորության ավանդական գծերի թուլացումը, երբեմն էլ՝ անհետացումը, զոհի բարդույթը, սեփական ազգային հավաքական ուժի նկատմամբ անվստահությունը, «ես»-ի հաղթանակը «մենք»-ի նկատմամբ, ազգային հպարտության կորուստը, անմիաբանությունը, ազգային գաղափարի թուլացումը կամ լիովին անհետացումը, պարտվողականությունը, ստրուկի հոգեբանության առաջացումը և այլն[5]:

Ինչպես վերը նշեցինք, կան ընդհանրական արժեքներ ու գաղափարներ ազգի և հայրենիքի հանդեպ պարտավորվածություն զգացող յուրաքանչյուր հայի համար: Դրանցից առաջինը և ամենակարևորը թերևս անկախ պետականության, անկախ հայրենիքի գաղափարն է: Հայոց հիմնախնդիրների և դրանց լուծումների մասին փայլուն պատկերացումներ տվող Գարեգին Նժդեհը ազգային հիմնախնդիրների մասին

[1] Густав Лебон, Психология народов и масс, Москва, 2012, с. 47.
[2] Տե՛ս Հ. Ասատրյան, Խռովք, Ե., 2015, էջ 48-52:
[3] Լալայան Մ., նշվ. աշխ., էջ 48:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 19:

խոսելիս հենց անկախ հայրենիքի զգացումի պակասի մասին է նշում. ‹‹Դեռ այսօր էլ աղմկում են քո հայրերից ոմանք,- մեզ պետք չէ անկախ Հայաստան:

-Անկախ Հայրենիքը անհրաժեշտ է հենց նրա համար, որ ձեզ՝ հոգով թզուկներիդ, դարձնի կատարյալ մարդ և Հայ՝ արժանի Անկախության,-պատասխանում է Մայիսի Քսանութի շենքը իր ուսերին կրող ժողովուրդ-հսկան››[1]: Միևնույն հիմնախնդրի մասին է խոսում նաև հայոց արդարացի ‹‹Նեմեսիս››-ի կազմակերպիչներից Շահան Նաթալին. ‹‹Եւ բոլոր ժողովուրդները, որ անհայրենիք են, դատապարտուած են մեռնելու, որովհետեւ առանց հայրենիքի ազգ չի կրնար ըլլալ եւ առանց ազգի հայրենիք չկայ: Երկու երեսները մէկ նիւթի››[2]:

Թերարժեքության բարդույթը, որ հետևանք է օտար տիրապետության, ունի կործանարար բնույթ: Դրա մասին է խոսում նաև Նժդեհը. «Այժմ նա *(հայությունը-Գ.Ա.)* չի թաքցնում, թե ինքը պարտվեց ու պատժվեց խստիվ, քանզի չկարողացավ օգտվել իր ցեղի ոգու անսպառ ուժերից»[3]: Իսկ ըստ Հայկ Ասատրյանի՝ դարեր շարունակ հայ ժողովրդի մեջ ներարկվել է փոքր և անզոր լինելու գաղափարը, ինչն էլ տվել է իր «պտուղները». «Մենք շարունակում ենք ենթակա մնալ ցրիչ ուժերի քմահաճույքին, մեր սեփական անզորության զգացումի նախապաշարումներին»[4]:

XXI դ. գլոբալիզացիայի առաջ քաշած վտանգների մեջ մեծ տեղ է «հատկացված» ազգային դիմագծի այնպիսի կարևորագույն բաղադրիչի խեղաթյուրման, ինչպիսին լեզուն է: Ցավով պետք է արձանագրենք, որ մի շարք երիտասարդների եզրութաբանության մեջ հետզհետե մտնում են միջազգային մի շարք եզրույթներ՝ խոսակցականից դուրս մղելով հայերեն համարժեքները: Երևույթի կործանարար բնույթի և ներկայիս ու խորհրդային ժամանակաշրջանների միջև նմանությունների մասին իրատեսորեն նկարագրում է ազգային գաղափարախոսության թեմայի հետազոտողներից Լ. Մատինյանը. «Երբ լեզվական մտածողությունը ազգային չէ, կենցաղը և մշակույթը նույնպես վերածվում է անձև համակարգի, ինչի ականատեսը մենք եղանք խորհրդային տարիներին, երբ ռուսաց լեզուն շատ ակտիվ մտավ մեր կենցաղ և մշակույթ՝ նուրբ անջրպետ առաջացնելով ռուսախոս և հայախոս շերտերի միջև»[5]: Ըստ էության, նույն հիմնախնդրի մասին է նշում նաև Գարեգին Նժդեհը. «Ողորմելի, փափկամարմին, ծույլ հայրենասիրություն, որ իր մայրենի լեզուն յուրացնելու ճիգն իսկ չի փորձում» [6]:

Շուրջ մեկ դար առաջ խոսելով հոգևոր արժեքների մասին՝ միևնույն խնդրի մասին է բարձրաձայնել նաև Վահան Տերյանը. «Ֆրանսիացիների նման կուլտուրապես կազմակերպված ու զորեղ և քաղաքականապես ապահով մի ժողովուրդ ամեն կերպ աշխատում է պահպանել իր ինքնության գլխավոր նշանը – իր լեզուն, և դրա համար ամենուրեք հիմնում է այն ալիանսները, որ մեր Թիֆլիսում էլ կա: Մինչդեռ մենք մի Մոսկվայում, ուր բազմահազար ու հարուստ գաղութ ունենք, չունենք գեթ մի փոքրիկ ընկերություն, մի հիմնարկություն, որի նպատակը լիներ հայոց լեզվի պահպանումն ու տարածումը ոչ թե օտարների, այլ մերայինների՝ հայերի մեջ» [7]: Ուշադրության է արժանի հատկապես *«հայոց լեզվի պահպանումն ու տարածումը ոչ թե օտարների, այլ մերայինների՝ հայերի մեջ»* հատվածը: Պետք է մշտապես հիշել, որ հայոց ազգային գաղափարախոսության հիմքում չեն կարող դրվել մեծապետական և խոշոր տերություններին կամ քոչվորներին բնորոշ՝ այլոց հաշվին սեփականը կերտելու գաղափարներ, ինչի պարզ բնորոշումը տալիս է Տերյանը:

Ազգերն իրարից տարբերվում են ազգային մշակույթով: Վերջինս ազգային գաղափարախոսության կարևորագույն հիմնասյուներից մեկն է, և ազգային մշակույթը խեղաթյուրելը հավասարազոր է ազգի հետագա գոյությունը կասկածի տակ դնելուն:

---

[1] Գարեգին Նժդեհ, Որդիների պայքարը հայրերի դեմ, Ե., 2014, էջ 8-9:
[2] Շահան Նաթալի, Թուրքերը եւ մենք, Երեւան, 2011, էջ 26:
[3] Գարեգին Նժդեհ, նշվ. աշխ., էջ 19:
[4] Ասատրյան Հ., նշվ. աշխ., էջ 46:
[5] Մատինյան Լ., Հայ ազգային գաղափարախոսության վերանայումը որպես ժամանակի օբյեկտիվ պահանջ, Տե՛ս «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, Ե., 2014, էջ 188:
[6] Գարեգին Նժդեհ, նշվ. աշխ., էջ 58:
[7] Տերյան Վ., Հոգևոր Հայաստան, էջ 537:

Ամենևին պետք չէ տպավորություն ստանալ, որ մենք ընդհանրապես դեմ ենք այն ամենին, ինչը հայկական չէ, և տառապում ենք գերարժեքության բարդույթով: Սակայն հստակորեն պետք է հասկանալ և գիտակցել, որ որևէ օտար երևույթ վերցնելիս մենք նախ պետք է փորձենք այն հարմարեցնել մեզ և մեր էությանը: Ինչպես վերը նշեցինք, ազգային գաղափարախոսությունը պետք է բխի ազգի էությունից՝ ամեն կերպ իրենից վանելով օտար՝ ոչ հոգեհարազատ գաղափարները: Այդ դեպքում ո՞րն է դրա հակաքայլը կամ ինչպե՞ս պետք է հաղթահարել այդ խնդիրը առավել ևս հիմա, երբ տեղեկատվական հոսքերի արագությունը գերազանցում է գրեթե ամեն ինչին: Հիմնախնդրի և դրա լուծումների մասին պատկերացումներ տալիս են վերոնշյալ ուսումնասիրողները: Նժդեհն այս առումով գրում է, որ «քաղաքականության մեջ պարտվում, ձախողում են այն ժողովուրդները, որոնք չունեն որոշ և հստակ նպատակ, կամ երբ ունեցածը խստորեն ազգային չէ» [1] : Լալայանը, խոսելով ազգային գաղափարախոսության ճշմարտացի ձևավորման մասին, նշում է՝ «անհրաժեշտ է շեշտել, որ Ազգային գաղափարախոսությունը պետք է խարսխվի ոչ թե օտարատյացության, այլամերժության, այլ՝ հայրենապաշտության, ցեղապաշտության, ասել է՝ առողջ ազգայնականության [2] հիմքի վրա» [3]: Ըստ Լենդրուշ Խուրշուդյանի՝ ազգային գաղափարախոսության բոլոր գործոնների պահպանման միջոցը մշակույթն է, առանց որի ազգ գոյություն ունենալ չի կարող: Ահա թե ինչու մշակույթի, կրթության և գիտության համակարգերը իրենց բնույթով պետք է լինեն ազգային և մշտապես գտնվեն պետության ուշադրության կենտրոնում: Խոսելով ժողովուրդների ոչնչացման պատճառների մասին՝ վերջինս նշում է նաև, որ ժողովրդին ինքնապահպանման բնազդից զրկելու և ոչնչացնելու հիմնական միջոցը հենց դպրոցի, բուհի և ազգային մշակույթի ապազգայնացումն է[4]:

Բախվելով առաջ քաշված հիմնախնդիրներին՝ տեսնում ենք, այստեղ է, որ անելիք ունի ազգային գաղափարախոսությունը: Վերջինս իր մեջ պետք է կրի ազգային հիմնախնդիրների և բարդույթների լուծման բանալիները, քանի որ առանց հիմնախնդիրների մասին խորքային պատկերացումներ կազմելու՝ լուծումների մասին խոսելն ավելորդ է: Փորձենք տալ դրանցից բխող, հստակ լուծումներ առաջարկող ազգային գաղափարախոսության պատկերը՝ ընդհանրացնելով թեմային անդրադարձ կատարած գործիչների և մեր տեսակետները: Ըստ մեզ՝ առաջին քայլերից մեկը պետք է լինի կրթական համակարգի ազգայնացումը: Հարկավոր է վերահմաստավորել այն մոտեցումները, որոնք դրվում են կրթական համակարգի հիմքում ազգային արժեքների, պատմական այս կամ այն անցքի մասին խոսելիս: Կրթական համակարգում ազգային մոտեցման անհրաժեշտության հարցը շեշտադրվել է դեռևս վաղուց: Գարեգին Նժդեհը տալիս է հիմնախնդիրների իր պատկերացրած լուծման ուղիները, ըստ որոնց՝ դրանց հիմքում ինքնահաղթահարման սկզբունքն է, փրկության հույսը սեփական ազգի ներուժի մեջ տեսնելը, անձնական շահի զոհաբերումը հայրենյաց շահին. ‹‹Դպրոցը կդառնա ազգային ոգու և ուխտի դպրոց: Կուսակցականի նշանաբանը կդառնա՝ կուսակցությանս հետ, բայց ազգիս համար›› [5]: Կրթական համակարգում ազգային մոտեցման խստագույն անհրաժեշտության մասին բարձրաձայնում են այլ ուսումնասիրողներ ևս: Այսպես, ըստ Լենդրուշ Խուրշուդյանի՝ «Այդ չափազանց կարևոր խնդիրը *(նկատի ունի հայրենիքի գաղափարի քարոզչությունը-Գ. Ա.)* գործնականում իրա-

[1] Գարեգին Նժդեհ, նշվ. աշխ., էջ 45:
[2] Մ. Լալայանը ստորև տալիս է ազգայնականության իր պատկերացումները, ըստ որի՝ ազգայնականությանը (նացիոնալիզմ) անհարիր են այլամերժությունը, օտարատյացությունը, անբնական ծավալապաշտությունը, որոնք հատուկ են ազգայնամոլությանը (շովինիզմ): Ազգայնականությունը տվյալ ազգի՝ իր բնական հայրենիքում հարատևելու և սեփական արժեքներին հավատարիմ մնալու, դրանք զարգացնելու խնդիր ունի: Տե՛ս Լալայան Մ., նշվ. աշխ., էջ 40-42: Նույն ձևակերպումն է տալիս նաև Լ. Խուրշուդյանը՝ նշելով, որ նացիոնալիզմը ծառայում է ազգերի ինքնապահպանմանը, զարգացմանը, համամարդկային արժեքների ստեղծմանը, որոնք ծնվում են ազգայինից: Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 30:
[3] Լալայան Մ., նշվ. աշխ., էջ 40:
[4] Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 22-23:
[5] Գարեգին Նժդեհ, նշվ. աշխ., էջ 18-19:

գործելու համար յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ունենա իր իսկական ազգային դպրոցը, ազգային կրթական համակարգը»[1]: Իսկ Ժյուլ Միշլեն, խոսելով հայրենիքի, հայրենասիրության և դրանց ճշմարտացի քարոզչության մասին, նշում է, որ հայրենիքի գոյատևման միակ միջոցը այնպիսի համապատասխան կրթություն տալն է, որը երեխաների սրտում կստեղծի հայրենիքի կերպարը. «փրկության ուրիշ ելք չկա»[2]: Նկատի առնելով ճապոնացիների կրթական փորձը՝ Լենդրուշ Խուրշուդյանը նշում է, որ հանգում ենք պատմության փորձով այն եզրակացությանը, որ ամեն մի ժողովրդի հաղթության, պարտության և ընդհանրապես գոյատևման հարցը որոշվում է ոչ այնքան ռազմի դաշտում, որքան ազգային դպրոցում, ազգային կրթական համակարգում[3]: Հաջորդ և կարևորագույն գործնական քայլերից մեկը պիտի լինի սեփական ուժերի նկատմամբ հավատի վերականգնումը. ‹‹Քեզնից զատ-խրատում է պատմությունը,- ո՛չ ոք չի կարող բարեփոխել քո դրությունը››: Ինքնափրկություն, ահա՛ պատմության թելադրանքը: Հայը հասկացա՞վ այդ՝ նա կանգնած կլինի փրկության անշեղ ճամփին››[4]: Ինքնահաղթահարման մասին է գրում նաև Հ. Ասատրյանը. ‹‹Ո՞վ պիտի հաղթանակի: Նա՛, որ իբրև ժողովուրդ ավելի՛ ընդունակ է ինքնահաղթահարումի›› [5]: Ինքնահաղթահարում և հավատ. այս մասին է բարձրաձայնում նաև Վահան Տերյանը. «Քննեցեք ձեր սիրտը և նայեցեք, թե կա՞ արդյոք այնտեղ հավատ, որով պիտի կենդանանա մեր այդ Հոգևոր Հայաստանը. եթե չկա, ապա զուր են ձեր ջանքերը նյութական Հայաստանի համար…»[6]:

Նմանատիպ գաղափարական հեղափոխության ժամանակաշրջան կարելի է համարել հայոց պատմության XIX դ. վերջը և XX դ. սկիզբը, երբ «հայ լուսավորիչներն արել էին իրենց գործը, արթնացրել էին հայության մեջ ազգային գիտակցությունը, անցյալի փառքը և ներշնչել սեփական ապագան արարելու ամուր հավատամք»[7]: Դա մի ժամանակաշրջան էր, երբ «տեղի էր ունենում հայության, որպես ամբողջական ազգի ձևավորում, նրա կողմից հայրենիքի գաղափարի խոր և ամբողջական ընկալում և ազգի քաղաքական նպատակների միաձուլում հայրենիքի գաղափարին»[8]: Խոսելով այդ նույն ժամանակաշրջանի մասին՝ Գարեգին Նժդեհը նշում է. «Երկար դարեր մեր պատմութիւնը չէր արձանագրել մի շրջան, ուր այնքան հերոսներ իրենց կեանքը երկիւղածօրեն պատարագէին իրենց ժողովրդի փրկութեան գործին»[9]:

Պատկերացում կազմելով ազգային հիմնախնդիրների և դրանց լուծմանը հասնող ուղիների մասին՝ հստակորեն կարող ենք եզրակացնել, որ հայոց ազգային գաղափարախոսությունը ոչ այլ ինչ է, քան ազգային հիմնախնդիրների լուծմանը նպաստող, պետություն-քաղաքացի հարաբերությունները կարգավորող և ըստ այդմ, ինչպես վերը նշեցինք, դասական հայի վարքն ու արժեհամակարգը թելադրող, ասատրյանական խոսքերով ասած՝ ցեղային արժեքազգացողությամբ համակված, ցեղամարդ հայեր դաստիարակող համակարգ: Հայոց ազգային գաղափարախոսության նպատակը ազգի հարատևության ապահովումն է՝ առաջ եկող բոլոր խնդիրներով: Սա, ըստ մեզ, ազգային միության հասնելու միակ և փրկիչ գործոնն է: Ազգային գաղափարախոսությունը «պետք է սահմանի այն հավիտենարժեք հասկացությունները և տա ընդհանրական այն արժեքները, որոնց շուրջ, անկախ անհատի քաղաքական և կրոնական համոզմունքներից, ընկերային դիրքից և գտնվելու վայրից, պիտի կայանա

[1] Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 35:
[2] Жюль Мишле, Народ, Москва, 1965, с. 149.
[3] Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ., աշխ., էջ 37:
[4] Գարեգին Նժդեհ, նշվ. աշխ., էջ 44:
[5] Ասատրյան Հ., նշվ. աշխ., էջ 37:
[6] Տերյան Վ., Հոգևոր Հայաստան, էջ 540:
[7] Եղիազարյան Ա., 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային միտքը որպես ազգայինի և համամարդկայինի ամբողջություն, Տե՛ս ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ե., 2012, էջ 71:
[8] Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն, Ե., 2006, էջ 51:
[9] Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 140:

մեր ազգային միությունը»[1]:

Այսպիսով, երբ քննության ենք առնում ուսումնասիրողների տեսակետները՝ հիմնված հայոց պատմության դասերի վրա, հստակորեն նկատելի է դառնում, որ պատմության այս կամ այն փուլում մեր հաջողությունները ծնվել են անկախ պետականության պահպանման գիտակցումից, ազգային մշակույթի պահպանման և մայրենի լեզուն չաղավաղելու անհրաժեշտությունները գիտակցելուց, և չարիքները, աշխարհաքաղաքական և պատմական իրադարձությունների տեսքով, եկել են դրանք մոռանալուց կամ դրանց պակաս ուշադրություն դարձնելուց: Ի տարբերություն որոշ ազգերի՝ մենք մեր ազգային գաղափարախոսության հիմնական առանցքում անկախ պետականությունից, ազգային մշակույթից և լեզվից զատ, որոնք համընդհանուր են, չենք դնում նվաճողական, այլոց տարածքների հաշվին մեր տարածքների ընդլայնման քաղաքականություն. «Հայոց ազգային գաղափարախոսությունը տարբերվում է մեծապետական ազգերին բնորոշ գաղափարախոսություններից նրանով, որ այն լինելով ավանդաբար՝ հնագույն ժամանակներից սկսած սեփական, խիստ յուրահատուկ քաղաքակրթական առաքելություն ունեցող ազգի գաղափարախոսություն, միաժամանակ անմիջականորեն արտացոլում ու հիմնավորում է ոչ թե այդ առաքելության բովանդակությունը, այլ տվյալ խնդրի իրականացումից հարկադրաբար շեղված ու կոտորակված հանրույթի գոյատևման ճիգերը» [2] : Չնայած այդ ամենին՝ ինչպես արդարացիորեն նշում է Լենդրուշ Խուրշուդյանը, պատմության թելադրանքով հողահավաքը դարձել է հայոց ազգային գաղափարախոսության հիմնախնդիրներից[3] մեկը: Սակայն չպետք է մոռանալ, որ մեր «հողահավաքման» գլխավոր առանցքում մեր պատմական հողերն են, ոչ թե այլոց պատմական հայրենիքը: Բացի այդ էլ, եթե վերցնենք վերոնշյալ լուսավորչության ժամանակաշրջանը՝ XIX դ. վերջը և XX դ. սկիզբը, նույնիսկ այդ ժամանակաշրջանում «հայ ազգային միտքը բոլորովին էլ չէր հիմնվում ազգի բացառիկության, այլ միայն ազատ ապրելու, պետականություն ունենալու, սեփական գալիքը կերտելու և համաշխարհային մշակույթի մեջ զգալի ներդրում ունենալու հնարավորության վրա»[4]: Ուստի, իրավամբ կարող ենք հանգել այն եզրակացության, որ հայոց ազգային գաղափարախոսությունը լիովին տեղավորվում է համամարդկային մտքի սահմանների մեջ՝ իր մեջ չներառելով մեծապետական և այլոց վնաս հասցնելու որևէ միտում:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ գործելով կարևորագույն հիմնահարցին անդրադարձած հեղինակների նշած սկզբունքներով և գաղափարներով՝ հնարավորինս շուտ կազատվենք բոլոր հոռետեսական կանխատեսումներից և գործի կդնենք ամեն հնարավոր միջոց՝ կյանքի կոչելու հայոց ազգային գաղափարախոսության գլխավոր հիմնադրույթները: Հայկ Ասատրյանը գրում է. «Հա՛յ, տու՛ր ցեղորեն արթնացած մի սերունդ, զարկող և զարկելով ստեղծագործող մի սերունդ, և պատմությունը քեզ պիտի վերադարձնի քո երկիրը»[5]: Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սկսված հայ-ադրբեջանական պատերազմական թեժ գործողությունները ցույց տվեցին, որ հերթական անգամ ‹‹ցեղորեն արթնացած›› մի ողջ սերունդ պարգևված է մեր ազգին, և ճիշտ ժամանակն է այդ հզոր ներուժը օգտագործելու պետականաշինության տարբեր ոլորտներում: Եվ այդ դեպքում լուրջ առաջընթացը երկար սպասել չի տա:

Асатрян Гегам, К вопросу об армянской идеологии,-Каждая нация за время своего существования создаёт целостную систему ценностей, чтобы реализовать собственные мечты и иметь место в мировой истории. В случае маленьких народов она часто превращается в научно обаоснованную национальную идеологию.

---

[1] Լալայան Մ., նշվ. աշխ., էջ 32:
[2] Խուդինյան Գ., Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն, էջ 33:
[3] Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 179-180:
[4] Եղիազարյան Ա., նշվ. հոդված, էջ 71:
[5] Ասատրյան Հ., նշվ. աշխ., էջ 32:

Есть обобщенные ценности, которые необходимы для существования нации (независимая государственность, язык, культура) но факторы исторического развития армянской нации вынуждают включать вопросы, которые нуждаются в решении помимо общих постулатов. это-укрепление государственности, безопасности армян, поддержание идеологического единства, а также обеспечение взаимосвязи Армения-Диаспора.

Asatryan Gegham, On the problem of Armenian national ideology,-Each nation makes an inflexible system of values to realize its own dreams, and to have its place on the stage of the world history. Armenian national ideology, the aim of which is provision of the nation's longevity, is considered in this text.

There are general values, that are certainly necessities for nation's existence (sovereign statehood, language, culture), but the factors of historical development of the Armenian nation, make us involve other problems too, besides strengthening the statehood on the base of national ideology, providing Armenians with safety and ideological unity, the provision of Homeland-Diaspora intercommunication.